



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“02” 03 2020թ.

N..... 294-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն


ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 441-Ա հրամանով և հիմք ընդունելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետի 2020 թվականի փետրվարի 17-ի թիվ Ն/26.1/650-2020 միջնորդագիրը՝ «ՄՈՒԿԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով ընդերքօգտագործման հրավունքի դադարեցման վերաբերյալ.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հարուցել վարչական վարույթ «ՄՈՒԿԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊ ընկերության թույլ տրված խախտումների հիմքով:
2. Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին՝
 - 1) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին.
 - 2) վարչական վարույթի արդյունքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ներկայացնել համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

2/29/2020

X 

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Signed by: TERTERYAN VACHE 1201620635

/ Ս. Պապիկյան